

ՊԱՏՐԻԿ ՏՈՆԱՊԵՏՅԱՆ

ԵՐԵՐՈՒՅԹ ՀՆԱՎԱՅՐԻ 2013-2014 ԹԹ. ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հետազոտությունների արդյունքները ներկայացնելուց առաջ, հարկ է հիշատակել անմոռանալի գործընկեր և վաստակավոր հնագետ-երկրաշափ Ժորժ Մարշանին, որը վախճանվեց 2014 թ. գիտարշափի ժամանակ (Georges Marchand – 16/06/1951 – 15/06/2014): Թե՛ մարդկային և թե՛ մասնագիտական առումներով սա շատ ծանր մի կորուստ էր արշավախմբի համար:

1. LA3M-ի հայ-ֆրանսիական հնագիտական արշավախոսմբ Երերույթում:

2009 թ. սկսած Շիրակի երկրագիտական թանգարանը¹ և Էքս-Մարսել համալսարանի² LA3M հնագիտական լաբորատորիան³ համատեղ հետազոտություններ են իրականացնում Շիրակի մարզի երերույթ վաղ քրիստոնեական ու միջնադարյան հնավայրում: Ամեն տարի մոտ մեկ ամիս տևողությամբ գիտարշավ է կազմակերպվում այդ հնավայրում:

Ուսումնասիրությունն ունի միջմասնագիտական ուղղվածություն և ընդգրկում է զուգահեռաբար մի քանի բնագավառներ՝ հայագիտություն ու աղբյուրագիտություն, արվեստի ու ճարտարապետության պատմություն, կառուցների հնագիտություն, դասական հնագիտություն, երկրահնագիտություն: Միաժամանակ հնավայրի պահպանումը, բարեկարգումն ու արժեկորումը և կապը դրա հարևանությամբ ասպրոդ համայնքի հետ նույնպես ուշադրության առարկա են:

¹ Որպես ՀՀ ԳԱ. հնագիտության և ազգագրության ինստիտուտի ներկայացուցիչներ տեղում՝ արշավախմբի աշխատանքներին մասնակցում են Շիրակի երկրագիտական թանգարանի աշխատակից, հնագետ, պատմահնագիտական ժառանգության ակտուց, պ. գ. թ. Լարիսա Եգանյանը, և քանգարանի տնօրեն, հնագետ, պ. գ. թ. Համազասպ Խաչարյանը: Վերջինս արշավախմբի համադիկավարն է:

² Aix-Marseille Université, CNRS, LA3M, UMR 7298, 13094 Aix-en-Provence, France.

³ Laboratoire d'Archéologie Médiévale et Moderne en Méditerranée (LA3M, UMR 7298), AMU / CNRS, Aix-en-Provence = Միջերկրածովյան ավազանի միջնադարյան և նոր [moderne = XV-XVIII դդ.] հնագիտության փորձարան [լաբորատորիա], էխո-ան-Պրովանս: Արշավախմբի ֆրանսիացի անդամներն են Paul Baillet, Andreas Hartmann-Virnich, Christophe Jorda, հանգույցայ Georges Marchand, Damien Martinez, Laurent Schneider, ինչպես և շվեյցարիացի Fabien Krähenbühl: Տողերիս հեղինակը արշավախմբի դեկանավարն է:

Առաջին երկու տարիներին կատարվեցին վագերագրման, շափագրման աշխատանքներ, արտաքին ուսումնասիրություններ և, որպես անհրաժեշտ հիմք հետագա աշխատանքների համար, ստեղծվեց տեղանքի ամբողջական ու մանրակրկիտ հանուկիք, քանի որ այդպիսի հատակագիծ դեռ չկար (հանգուցյալ ժորժ Մարշանի արժեքավոր իրագործումներից մեկն է): Իսկ 2011 թ. սկսած նախորդ գործերին զուգահեռ, սկսեցինք նաև հնագիտական պեղումներ և երկրահնագիտական (երկրաձևաբանական/geomorphologique) պրատումներ: Այդ բոլորի մասին արդեն գեկուցել ենք Գյումրիում⁴, Երևանում⁵ և այլուր (Երուսաղեմ, Մարսել, Էքս-ան-Պրովանս, Փարիզ)⁶: Առաջարկվում է հիմա հակիրճ ձևով ներկայացնել վերջին երկու տարիների աշխատանքների արդյունքները:

2. Բազիլիկի ուսումնասիրությունը

Ուշադրության կենտրոնում է եռանավ հայտնի բազիլիկը, որ բազմակողմանի՝ աղբյուրագիտական, ճարտարապետական, արվեստաբանական, հնագիտական... քննության է ենթարկվում: Պրատումների այսօրվա փուլում, վիճակության, ճարտարապետության ու զարդարանքի, ինչպես և ասորական աղերսների ուսումնասիրությունը հավանական է դարձնում բազիլիկի հիմնական թվագրումը VI դարով⁷:

Կառուցի հարավ-արևմտյան անկյունային սենյակում 2013 թ. մասնակի պեղումներ կատարեցինք հատակի այն հատվածում, ուր սալահատակը բացակայում է: Պեղումները պարզեցին, որ սենյակի տակ, սկզբնական ենթադրության հակառակ, ստորգետնյա ծավալ չկա, ոչ էլ նախաքրիստոնեական շերտի հետք: Բայց անմիջապես այժմյան հատակի տակ բացվեց նախնական, ավելի խնամյալ, սակայն վնասված հատակ: Դրա մոտ գտնված փայտածիսի բեկոր-

⁴ Լ. Եղանյան, Հ. Խաչատրյան (Հայաստան), Պ. Մարտինեզ, Պ. Տոնապետյան (Ֆրանսիա), «Հայ-ֆրանսիական հնագիտական արշավախմբի նոր պրատումները Երենովյ հնավայրում», Պատմամշակութային ժառանգություն և արդիականություն, Միջազգային գիտաժողով, Զեկուցումների դրույթներ, Գյումրի, 4-6 հոկտեմբերի, 2013 թ., էջ 15-18:

⁵ Պ. Տոնապետյան (Ֆրանսիա), «Նոր պրատումներ Երենովյի հնավայրում», Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, 17-19 հոկտեմբերի, Երևան, 2013 թ.:

⁶ Գիտարշավների տարեկան հաշվետվորյունները տե՛ս LA3M-ի կայքը.

http://la3m.cnrs.fr/pages/recherche/axes/axe-2/A2_Prog3/ereruyk/ererouyk.php:

Փոլային հաշվետվորյուններ տե՛ս. P. Bailet, P. Donabédian, A. Hartmann-Virnich, C. Jorda, G. Marchand, D. Martinez, L. Schneider, «Nouvelles recherches sur l'ensemble paléochrétien et médiéval d'Eereruyk en Arménie», *Antiquité Tardive*, 20, Paris / Turnhout, 2012, p. 315-341; P. Donabédian, «Eereruyk: nouvelles données sur l'histoire du site et de la basilique», *Mélanges Jean-Pierre Mahé*, Travaux et Mémoires, 18, Paris, 2014, p. 241-284.

⁷ P. Donabédian, «Eereruyk: nouvelles données...», p. 249-255.

ների ուղիղությամբ վերլուծությունը, նախնական տվյալներով, մատնանշում է VIII-X դարերի միջակայքում տեղի ունեցած մի հրդեհ, որից և հավանաբար վնասվել է առաջին հատակը:

2014 թ. արշավախումբը թույլտվություն ստացավ պեղելու բազիլիկի հատակի տակ, ներսակողմի հարավ-արևելյան մասում, ուր սալահատակը չի պահպանվել, հատկապես խորանի հարավյային կեսի տակ, մինչև հարավ-արևելյան մույթի խարիսխը (տե՛ս ներդիր, նկ. 13): Այստեղ ևս պարզվեց, որ այժմյան եկեղեցու տակ չկա ավելի հին շերտի մնացորդ: Բայց հորատումը հնարավորություն տվեց ուսումնասիրելու խորանի պատերի հիմքը:

Երերովքի բազիլիկում խորանի պատերի հիմքը կազմված է քարերի երեք շարքից: Առաջինը՝ անմիջապես ժայռի վրա դրված, համարյա անմշակ, անկանոն, միջին և փոքր շափի քարերից է: Երկրորդը մի քիչ ավելի խնամյալ ու կանոնավոր է, երրորդը՝ համարյա սրբատաշ քարերից: Առաջին երկու շարքերի քարերի արանքում խիճ ու անկանոն բեկորներ են լցված կավա-տղմոտ մի նստվածքի մեջ, որ շաղախ չի կարելի համարել: Մինչդեռ վերին շարքը սպիտակավուն հատիկավոր մի իսկական կրաշաղախով է ամրացված: Միայն պատերի տակ դրված այս եռաշար հիմքը հաստատում է այն, ինչ արդեն մի քանի օրինակներից գիտեինք հին հայկական՝ ոչ խոր և ոչ էլ լայն հիմքերի մասին⁸: Երերովքում հնարավոր եղավ գիտել նաև մեկ այլ կարևոր յուրահատկություն. Հիմքի առաջին երկու շարքերը համարյա կապակցված չեն, այսինքն օժտված են մի տեսակ « շարժականությամբ », որ կարող էր հակաերկրաշարժային գործառությունները ավելի ընդգծված է, քան խորանի մնացած պատինը:

Հավելենք, որ հիմքի վերին շարքը իր արևմտյան ծայրում որոշ պայտաձևություն է դրսենորում, մինչդեռ այդ գիծը չի դիտվում դրանից վեր կանգնած պատի վրա: Հիշենք, որ համեմատելի մի երեսով՝ առկա է Աղցի/Աղձի բազիլիկի խորանում, ուր այս անգամ գետնից վեր կանգնած առաջին շարքի պայտաձևությունը ավելի ընդգծված է, քան խորանի մնացած պատինը:

2014 թ. բազիլիկի խորանի և հարավ-արևելյան անկյան տակ կատարված պեղումների շնորհիվ ստացանք ևս մի օգտակար տեղեկություն կառուցի մասին: 1977 թ. իտալական ալբոմում հրատարակված լայնական կտրվածքից արդեն գիտեինք, որ այն, ինչ ընկալվում է որպես բազմաստիճան եզրերով մի հզոր հարթակ (ինչպես Տեկորում ու Զվարթնոցում), որի վրա հուշարձանը կարծես ամբողջությամբ դրված է, մասամբ տեսողական (շատ հաջող) մի հնարք⁹: 2014 թ. համոզվեցինք, որ պատերի հիմքերը նստած են ժայռի վրա,

⁸ P. Donabédian, «Les architectes de l'Arménie médiévale usaient-ils de dispositifs paracétamiques?», REARM, 34, Paris, 2012, p. 169-242, այստեղ էլ 173:

⁹ Documenti di Architettura Armena 9, Ererouk, Milano, 1977, էլ 52, sezione b-b լայնական կտրվածքը ցույց է տալիս, որ նավի հատակի մակարդակը մոտ է արտաֆին աստիճանների ստորին մակարդակին:

իսկ եկեղեցու տակ ամբողջական հորիզոնական հարթակ չկա: Այսպիսով հաստատվեց, որ աստիճանների արտաքուստ այդքան ազդու գոտին ստեղծված է գետնախարիսխի տպավորություն թողնելու համար, մինչդեռ իրականում այդ գետնախարիսխը գոյություն չունի: Ստեղծված է սրբարանի վեհությունն ընդգծող մի միջոց, որ կարծես կոշված է դեպի այունասրահները բարձրանալու անհրաժեշտությունն արտահայտելու՝ նախքան եկեղեցու նավի հատակն իշնելը: Հստ էության եգիպտական բուրգերի, միջագետքյան զիգգուրատների, դասական մեհյանների՝ դեպի սրբարան բարձրանալու նույն սկզբունքն է, որ առկա է նաև հայ ու վրացական վաղքրիսոնեական հուշային կոթողների պատվանդաններում: Գուցե հենց դասական տաճարների *krepis*-ից են սերված բազմաստիճան եզրերով այդ գետնախարիսխները:

Այդ գիտարկումը մի նոր նրբերանգ է հաղորդում տողերիս հեղինակի այն ենթադրությանը, որ վաղքրիստոնեական և նախարարական Հայաստանում գոյություն են ունեցել «հուշային / հուշարձան ?» (*memorial*) բացառիկ եկեղեցիներ (*Sekopor*, Երերուցք, Զվարթնոց...), որոնք «հասարակ» եկեղեցիներից տարբերվել են ի միջի այլոց իրենց տակ եղած աստիճանավոր եզրեր ունեցող գետնախարիսխով (*krepis*-ով)¹⁰: Իսկ «հասարակ» (սովորական ծխական) եկեղեցիներում, որոնք կազմում են հայկական եկեղեցիների ճնշող մեծամասնությունը, կիրառվել է գետնախարիսխի սեղմ, կրճատ տարբերակը՝ պատերի ստորին մասում արտաքուստ տեղադրված մի քանի աստիճանների ձևով: Կարող ենք համարել, որ Երերուցքում ունենք «հուշային» եկեղեցիներին հատուկ բազմաստիճան գետնախարիսխի նմանակումը, կամ «կեղծ» տարբերակը: Վերջինս կարող է դիտվել իբրև միջանկյալ մի փուլ՝ իսկական գետնախարիսխից դեպի ճակատների արտաքին ստորին աստիճանները տանող ճանապարհին:

Երերուցքի բազիլիկի շինարարական պատմության փուլերը ճշտելու նպատակով պատերը ենթարկվեցին «կառուցվածքների հնագիտության» (կամ «Ճարտարապետական հնագիտության») գննմանը: Այդ քննությունը հանգեցրեց այն կարծիքին, որ շարվածքի մեջ նկատելի տարբերությունները կապված են կարձատել ընդհատումների և ո՛չ մտահղացման հիմնավոր փոփոխությունների հետ, ինչպես վերջերս ենթադրել են մի քանի ֆրանսիացի և իտալացի գիտնականներ¹¹:

Միակ լուրջ փոփոխությունը նկատվում է արևմտյան ճակատի վրա: Ակն-

¹⁰ P. Donabédian, *L'âge d'or de l'architecture arménienne. VIIe siècle*, Marseille, 2008, p. 28, 40, 49, 56, 76, 78, 83, 133-134, 186, 192, 203, 206, 277.

¹¹ J.-C. Bessac, «Observations sur la construction de la basilique d'Ererouk en République d'Arménie (2^e partie)», *Syria*, 89, Beyrouth, 2012, p. 331-366; N. Montevercchi, C. Tonghini, «Lo sviluppo costruttivo della basilica di Ererouk (Armenia), secoli VI-X: una ri-lettura archeologica», *Arqueología de la arquitectura*, 9, Madrid/Vitoria, 2012, p. 29-56.

հայտ է արևմտյան սյունասրահի վերակառուցումը, որ գուցե բավական վաղ է կատարվել: Դրա արդյունքում ստեղծվել է նախորդից զգալիորեն ավելի ցածր մի նոր սրահ՝ աշտարակաձև երկու կողային սենյակների միջև: Դրա թաղի վրա կարելի է պատկերացնել ասորական բազիլիկների արևմտյան ճակատի «պատշգամբները» հիշեցնող մի հարթակ:

Դեռ զուտ վարկածային վերակազմովիյան մեր փորձի մեջ պատկերված է բազիլիկի հավանական ընդհանուր ծավալը այդ վերակառուցումից առաջ: Շինության արտասովոր յուրահատկություններից են հս-հվ ուղղվածություն ունեցող՝ արևելյան անկյունային սենյակների վերին հարկի երկանց տանիքներն իրենց թեքությամբ՝ ավելի բարձր նավի կողմում, ավելի ցածր արտաքին ծայրում¹²:

Փորձ արվեց նաև բազիլիկի կողային սյունասրահները վերակազմելու: Դրա համար հիմք ընդունվեց սյունասրահների արևելյան կամարից պահպանված առաջին քարի՝ կրունկի շափագրությունը: Այդ եղանակով հյուսիսային սյունասրահը ստանում է վեց կամ (ավելի հավանական է) յոթ սյուներ, իսկ հարավայինը՝ վեց սյուներ(տե՛ս ներդիր, նկ. 14): Դա էլ իր հերթին ստեղծում է մի այլ արտասովոր ու խնդրահարույց երևովիթ սյուների կշռովի լրիվ ներդաշնակ չէ հարավային ճակատի շքամուտքերի հետ:

Երերուցի բազիլիկին վերաբերող վերջին երկու տարիների աշխատանքների շարքում նշենք նաև հանգուցյալ երկրաշափ գործընկերոց հետ կատարած շափագրական լրացումները, որոնց արդյունքում ստացանք մի նոր հատակագիծ՝ գիտական շրջանառության մեջ եղածներից ավելի ստույգ ու վստահելի (տե՛ս ներդիր, նկ. 15):

3. Կորողների պատվանդանները

Բազիլիկից բացի, երերուցի ընդարձակ համալիրի բազմապիսի ու հաճախ առեղծվածային մյուս շինությունների ավերակները նույնպես քննության արժանացան: Եկեղեցուն հարավից հարող գոտին աշքի է ընկնում մոտավորապես քառակուսի հատակագծով, աստիճանավոր պատվանդանների բազմաթիվ հետքերով: Ուշ անտիկ և վաղ միջնադարյան Հայաստանում ու Վրաստանում այս տեսակ պատվանդանների վրա կանգնեցվել են բավականին տարածված ուղղաձիգ հուշարձաններ, որոնք բաղկացած էին իրար վրա դրված պատշված մի քանի քարե տարրերից¹³. ա) վերոնշյալ աստիճանավոր պատ-

¹² Անսովոր է այստեղ ոչ թե տանիքի թեքությունը. այն նետեսում էր կողային սյունասրահների ծածկերին և դիտվում է նմանատիպ ասորական եկեղեցիներում օրինակ Տուրմանինի արևելյան սենյակների հարթ ծածկերի դեպքում: Անսովոր է այն, որ երկթեք կտուրներն ունեն այսպիսի թեքություն:

¹³ Այս տեսակի ուղղաձիգ հուշարձանների կառուցվածի մասին նշենք միայն մի քանի կարևոր ու համեմատարա նոր հրապարակումներ. Ս. Մհացականյան, Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները, Եր., 1982, էջ 9-46, Հ. Պետրոսյան, հագար. Ծագումը,

վանդան, բ) խորանարդածև խարիսխ¹⁴, գ) քանդակազարդ քառանիստ կոթող կամ անզարդ (գլանածև կամ բազմանիստ) սյուն, դ) խոյակ (երբեմն դրան փոխարինում էր կոթողի խոյակածև վերին մասը), ե) երբեմն միջանկյալ մի տարր, որ կարելի է «խաչկալ» անվանել¹⁵, զ) թևավոր խաչ¹⁶: Ի դեպ երերուցք հնավայրը հարուստ է կոթողների բեկորներով և պահպանում է նաև փոքր խոյակների ու քարե խաչերի մի քանի մնացորդներ¹⁷: Այս տեսակ հուշարձաններ հաճախ (բայց ոչ միշտ) կանգնեցվում էին սրբարանի հվալ կամ հսալ, կամ ավելի հազվագետ՝ հվամ անկյան մոտ:

Երերուցքի եկեղեցուց հարավ գտնվող տարածքը մաքրելուց հետո լավ տեսանելի դարձան պատվանդաններից յոթի կամ ութի մնացորդները: Այդ քանակը բացառիկ է ամբողջ վաղ քրիստոնեական Հայաստանում, որտեղ սովորաբար մեկից-երեքից շի անցնում դրանց թիվը միևնույն սրբարանի մոտ¹⁸: Երերուցքի բազիլիկի հարավ-արևելյան անկյան մոտ, հատկապես ուշագրավ է հս-հվ առանցքով տեղադրված չորս պատվանդանների շարքը: Սրանցից մի քիչ հվ և հվամ ևս երկու հատ է նկատվում, իսկ տվյալ գոտու արևմտյան ծայրում դեռ երկու պատվանդանների հետքեր են գտնվում: Վերակազմության մեր փորձում ցույց է տրված այդ պատվանդանների վրա ենթադրվող կոթողների կամ սյունների շատ պարզեցված պատկերը, այդ երևույթին անծանոթ ընթերցողին ընդհանուր գաղափար տալու նպատակով:

Նման ուղղաձիգ հուշարձանների դերի մասին որոշ տարակարծությունների կողքին, ընդունված է այն կարծիքը, որ դրանք ունեն լայն առումով «հուշային» (*memorial*) բնույթ, ընդգրկելով և հիշատակման, և՝ մահարձանային, և՝ գերեզմանական գործառությները, առանց բացառելու պաշտամունքի ա-

¹⁴ գործառությը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Եր., 2008, էջ 44-46, Գ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան քառանիստ կոթողները, Եր., 2012, էջ 47-55:

¹⁵ Գ. Գրիգորյանը նախլնարում է պատվանդանը «Փարիսիս» անվանել, իսկ դրա վրա դրվող խորանարդան խարիսխը նա առաջարկում է «սեղան» կոչել:

¹⁶ Ըստ Հ. Պետրոսյանի (նշ. աշխ., էջ 14, 46): Գ. Գրիգորյանի համաձայն, ամպհովանի հիշեցնող և գնդան վերջավորությամբ այդ մասը տաճարի և երկրագնդի պատկերն է (նշ. աշխ., էջ 49-50):

¹⁷ Թեավոր խաչի առկայության պատճենով, Հ. Պետրոսյանը նման հուշարձաններ անվանում է «խաչակիր կորող»: Սակայն Գ. Գրիգորյանը (նշ. աշխ., էջ 50) ենթադրում է, որ եղել են բացառություններ. նադիտել է տաճիս, որ մի քանի դեպքերում խաչը նախատեսված շի եղել խոյակի կամ կոթողի խոյական վերջավորության վրա:

¹⁸ Դրանցից շորաը ցուցադրվում են այժմ, մինչև 2016 թ., Հայաստանի Պատմության թանգարանի արտամին սյունարանում: Տե՛ս ցուցահանդեսի կատալոգը. Գ. Գրիգորյան, Քարերը ժողովելու ժամանակը, Եր., 2013, էջ 40, 44, 53-54, ո՞ 21-24:

¹⁹ Այդ մասին տես. P. Donabédian, *L'âge d'or...*, p. 22-23, 26-27, 206: Գոգարանի և Քասաղի վաղ քրիստոնեական եկեղեցիների մոտ նման հուշարձաններից երեք-չորս նմուշներ կային (Գոգարանում դրանք վերակառուցվել են), որոնց սկզբնական տեղը սակայն ստույգ հայտնի չէ:

ուարկա լինելը¹⁹: Բայց ինչ վերաբերում է պատվանդանի բուն գործառույթին, ապա դեռ անհայտ է մնում, արդյո՞ք այն ծառայել է միայն որպես հիմք՝ խաշով պսակված կոթողի կամ սյան խարիսխի համար, թե ունեցե՞լ է միաժամանակ գերեզմանական ուրույն գեր, այսինքն կարո՞ղ էր արդյոք իր կենտրոնում թաղում պարունակել: Այդ մասին կարծես վկայում է Ա. Սահինյանի հաղորդած մի տեղեկություն²⁰. 1944-1947 թթ. Քասաղի բազիլիկի հվալ անկյան մոտ պատվանդանի կենտրոնական «խորշում» (փոսո՞ւմ) գտնվել է երկու կմախք՝ «ոչ պառկած վիճակում» (պազա՞ծ): Սակայն հնագիտական հաշվետվության, գտածոների, գծագրերի և նկարագրության բացակայությունը թույլ չի տալիս կմախքների հնությունը ճշտելու: Ներկայումս տեղը զբաղեցնում է նորագույն մի գերեզման: Բացառված չէ, որ Ա. Սահինյանի հայտնաբերած կմախքները այնտեղ տեղադրվել են պատվանդանի ուշ վերօգտագործման առիթով²¹:

Այդ հարցը պարզելու նպատակով 2011 թ. հայ-ֆրանսիական արշավախումբը քննեց պատվանդաններից մեկը²², որ արդեն վնասվել էր գանձախույզ-ների կողմից (ինչի «շնորհիվ» էլ թույլատրվեց այնտեղ պեղել): Ավաղ «այցելուները» հուշարձանը քրքրել էին մինչև խորքը և հորատումը հնարավորություն շտվեց գործառույթի հարցին պատասխանելու: Բարեբախտաբար 2013 թ. թույլատրվեց պեղել մեկ այլ պատվանդանի²³ մնացորդի ներքին ծավալը, որ նման «այցելությունից» զերծ էր մնացել և դեռ լցված էր նախնական հողով: Իշնելով մինչև բնական գետինը պարզեցինք, որ այնտեղ թաղում չի եղել: Այսպիսով, գոնե մի նմուշով, առաջմ հերքվում է գերեզմանական գործառույթը:

¹⁹ Ուղղաձիգ հուշարձանների (կամ «խաչալիք կորողներ») գործառույթի մասին տես. **Գ. Յովսիկեան**, նիսթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուատի եւ մշակոյթի պատմութեան, Պրակ Գ., նիս Ենրէ, 1944, էջ 46-127 («գերեզմանական կորողներ»), **Բ. Առաքելյան**, Հայկական պատկերաբանդակաները IV-VII դարերում, Եր., 1949, էջ 33 («հուշարձաններ, նեղ իմաստով մահարձաններ»), **Լ. Ազարյան**, Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Եր., 1975, էջ 58-59 («գերեզմանաբարեր, Հայաստանում ժրիստոնեության ընդունումը հավերժացնող կորողներ»), **S. Der Nersessian**, L'art arménien, Paris, 1977, p. 63 («stèles votives; monument commémoratif»); **J.-M. Thierry, P. Donabédian**, Les arts arméniens, Paris, 1987, p. 75 («stèles votives ou mémoriales; deux fonctions étroitement unies, l'une votive, l'autre funéraire»); **Ա. Մնացականյան**, նշվ. աշխ., էջ 17 («մահարձան, նշանակոր իշխանի հիշատակը հավերժացնող, սակայն երեկ տապանակար»); **Հ. Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 17-18 («պաշտամունիքի առարկաներ»), **Գ. Գրիգորյան**, Հայկական վաղ..., նշվ. աշխ., էջ 31-34 (հասարակության լյանքի բազմազան երեսակները, մամբ ներառյալ, արտացոլող գործառույթների լայն բազմազանություն, ընդհանուր մի սկզբունքով. մարդու ու աստծու միջև կապի ձգտման արտահայտություն):

²⁰ **Ա. Սահինյան**, Քասաղի բազիլիկայի ճարտարապետությունը, Եր., 1955, էջ 55:

²¹ Գ. Գրիգորյանը կասկածի տակ չի դնում **Ա. Սահինյանի** վկայությունը. «բազմաթիվ կորողների կանգնեցման շարժադիրը վկայող միակ փաստն է» (Գ. Գրիգորյան, Հայկական վաղ..., նշվ. աշխ., էջ 31):

²² Վերը նշված շորո պատվանդաններից արևմտս՝ հ. 5 պատվանդանը:

²³ Վերը նշված շորո պատվանդաններից երկրորդը՝ եկեղեցու որմնախարիսխից հաշված:

4. Գերեզմանոցի ուսումնասիրությունը

2011 թ. սկսած արշավախումբը զննում է եկեղեցուց հարավ տարածվող այդ գոտին, որտեղ գտնվում են վերոնշյալ պատվանդանները, և դրանից արևելք տարածքը, ուր առկա են մի քանի քարարկղների մնացորդները: Այստեղ կատարված պեղումներն ի հայտ են բերել մի գերեզմանոց: Այն տարածված էր եկեղեցու հարավային լանջից ու հարավ-արևելյան անկյունից մինչև դրանցից հարավ ու արևելք ընթացող պատերը, մինչդեռ պատերից անդին էլ թաղում չի դիտվում: Որոշակի է, որ գարերի ընթացքում եկեղեցու խորանը և դրա հարևանությամբ կանգնեցրած խաչակիր հուշարձանները (կոթողները) իրենց մոտ քաշել-հավաքել են բազմաթիվ թաղումներ: Հիշեցնենք, որ անթվակիր, բայց հավանաբար հին մի արձանագրության համաձայն երերուցի բազիլիկը նվիրված էր միաժամանակ սուրբ Կարապետին (սուրբ Հովհաննես Մկրտչին) և սուրբ Նախավկային (սուրբ Ստեփանոսին)²⁴: Հավանական է թվում, որ մեծածավալ, տարբեր առումներով բացառիկ այս սրբարանը պատսպարել է Հայաստանում շատ պաշտելի այդ երկու սրբերի մասունքները: Դա էլ իր հերթին քաշողական մեծ ուժ կարող էր ունենալ ամբողջ շրջանի բնակչության համար, թերևս նաև նրա սահմաններից դուրս՝ ասորի ուխտավորների համար. Հաշվի առնելով ճարտարապետական ընդհանրությունները ասորական հուշարձանների հետ և հունարեն արձանագրությունները²⁵, կարելի է պատկերացնել ասորական տարածքներից եկած ուխտավորների, կամ գոնե Հայաստանում գտնվող ասորիների այցելություններ երերուցք²⁶:

2011-14 թթ. այստեղ բացվել ու ուսումնասիրվել են վաթսուն վեց գերեզմաններ: Մարգկային ոսկորների վրա կատարված ուաղիուածխածնային վերլուծումներից ստացվել են քսանմեկ թվագրումներ, և ևս երեք արոյունքներ սպասվում են 2015 թ. գարնանը: Առկա տվյալները ցուց են տալիս, որ թաղումները կատարվել են ուշ անտիկ շրջանից (սկսվել են եկեղեցու կառուցումից առաջ) մինչև համարյա մեր օրերը. վաղագույն գերեզմանները III-V դարերից են (մինչ բազիլիկը, ինչպես նշեցինք, դժվար թե VI դարից վաղ շինված լինի), իսկ նորագույնը՝ XVIII-XX դդ.: Սակայն (դատկելով բատ ուսումնասիրված տարածքի) գերեզմանոցը սկսել է իսկապես զարգանալ VIII-X դարերում:

²⁴ Ըստ հեղինակների VI-VII դդ.-ին կամ X-XI դդ.-ին վերագրվող այդ արձանագրության մասին վերջին ամփոփ ուսումնասիրությունը տե՛ս P. Donabédian, «Ereruyk»: nouvelles données...», էջ 269-275:

²⁵ P. Donabédian, «Ereruyk»: nouvelles données...», էջ 262-268:

²⁶ Ըստ Ն. Պագլազովայի, հարևան Տեկորում հայտնաբերված ասորական արձանագրությունները կարող են փորագրվել ասորի ուխտավորների կամ Հայաստանում ապրող ասորի հոգևորականների կամ առևտուրականների կողմից. H. Паглазова, «Текор – храм князей Камсараканов», *Архитектурное наследство*, 50, Մոսկվա, 2009, էջ 5-16, այստեղ էջ 6-7:

Այդ ժամանակ գլխավոր շորս պատվանդանների շարքից անմիջապես արևմուտք ստեղծվել է կարծես «առանձնաշնորհյալ» մի գոտի՝ մասամբ վերօգտագործված քարերով եզերված։ Գուցե ընտանեկան կամ տոհմային այս տարածքում հայտնաբերվել են VIII-X դարերով թվագրված վեց գերեզմաններ։

Մինչև X դարը գերեզմանոցն արտացոլում է սովորական մի համայնքի վիճակը, ուր կան տարբեր տարիքի կանաքը, տղամարդիկ ու մանուկներ, հավանաբար հարեւան բնակավայրից։ Իսկ XI-XII դարերում ծիսական, դավանաբանական կամ ինչ-որ այլ փոփոխության հետևանքով, գերեզմանոցը ստանում է նոր «մասնագիտացում», ընդունելով համարյա բացառապես (նորից մեր բացած «պատուհանից» դիտված) նորածին, նույնիսկ վաղածին երեխաների։ Այդ դարերում թաղվածներից միակ մեծահասակ անձը հիսունն անց մի կին է։ Այդ առեղծվածը պարզելը արշավախմբի մարտահրավերներից է։ Թերևս դա կապ ունի եկեղեցու անվանակոչության հետ՝ սուրբ Հովհաննես-Մկրտչին և սուրբ Ստեփանոսին նվիրված լինելու հետ։ Գուցե սրբերի (մանավանդ Մկրտչի) մասունքների առկայությունը, որը, ինչպես վերը տեսանք, շատ հավանական է, կամ նրանց հատուկ կապը (ըստ պարականոն ավետարանների) սուրբ Անմեղների և Անդրանիկների հետ²⁷, բացառիկ արտոնություն էին ապահովում այնտեղ թաղելու համար այն փոքրիկ մանուկներին, որոնք չէին հասցրել իրենց մահից առաջ մկրտվել։

Վերջապես XIII դարից սկսած թաղումները քշանում են, հավանաբար արտացոլելով բնակչության նոսրացումը։

Ինչ վերաբերում է թաղման կարգերին, ապա դրանք մնացել են մոտավորապես նույնը դարերի ընթացքում՝ մարմինների դիրքի ու տեղադրման առումով։ Դիակները թաղված են մեջքի վրա, գլուխը դեպի արևմուտք, ոտքերը դեպի արեելք (որպեսզի վերջին դատաստանի օրը հանգուցյալը կարողանա ոտքի կանգնել երեսով դեպի արեելք), բազուկները հաճախ կրծքի վրա խաչված։ Սակայն պարունակողների մեջ նկատվում է որոշակի մի ժամատիպաբանական հոլովույթ (évolution chrono-typologique)։ Մինչև X դարը գերեզմանները սեղանակերպ արկղի ձև ունեն՝ կազմված կողի վրա կանգնեցված ուղղահայց քարե սալիկերից, որոնց ծածկում են իրար կպած հորիզոնական սալեր։ Իսկ XI դարից սկսած երեւան են գալիս ավելի համեստ թաղումներ՝ անմիջապես գետնի մեջ փորված փոսերի ձևով։

Ինչպես հայտնի է, քրիստոնեական գերեզմաններում առարկաները հագվագուտ են։ Երերույքում հայտնաբերված սակավաթիվ իրերի մեջ աչքի է ընկնում գոտու մի բրոնզե ճարմանդ։ Դրա տեսակը Հայաստանում արդեն հայտնի

²⁷ Հեղինակը շնորհակալ է ակադ. Ժան-Պիեր Մանկին՝ այդ կապի մասին տեղեկությունների ու դիտարկումների համար, որոնք հիմնված են նախաւետարան Յակոբայ և Մանկութեան հայկական Աւետարան պարականոն գրեթե վրա։

Էր հատկապես Դվինի պեղումներից, և համարվում էր միջնադարյան՝ լստ Բաբկեն Առաքելանի այն վերաբերում է IX-XIII դարերին²⁸: Մինչդեռ երեսուցում հայտնաբերված նմուշը թուզ է տալիս զգալիորեն հնացնել այս տեսակ ճարմանդները: Տակը եղած ոսկորի ուղիուածիւածնային վերլուծության շնորհիվ այն վստահորեն թվագրվում է 606-766 թթ. միջև:

Երերուցք հնավայրի յուրաքանչյուր գերեզմանի տեղը, անկախ դրա թվագրումից, նշվում էր դրանից մի քանի տասնյակ սմ վեր՝ գետնի մակերեսի վրա կանգնած տապանաքարով: Միակտոր տուփի երկթեք փոքր զանգվածներ են: Հնավայրում պահպանված մոտ հիսուն նմուշները իրենց նախնական տեղում չեն մնացել (մի քանի բացառություններով) և արձանագրություններից զուրկ են: Կարելի է հնագույնը համարել ու հավանաբար վաղ քրիստոնեական շրջանին վերագրել այն տապանաքարերը, որոնք դեռ բավականին տափակ լինելով, մոտ են քարարկղների կափարիչներին: Իսկ դարերի ընթացքում, մինչև ուշ միջնադար, կարելի է ենթադրել, որ աստիճանաբար ընդգծվել է տապանաքարերի լանջերի թեքությունը: Հայաստանում գոյություն ունեցող մյուս տեսակների՝ օրորոցածե, ուղղանկյուն կամ խոյածե տապանաքարեր երերուցքում չեն պահպանվել, իսկ խաչքարերի բեկորները խիստ սակավաթիվ են, ընդ որում բոլորն էլ մանր կտորների են չարդված:

5. «Պարսպապատը» և ծորակում գտնվող կառույցների մնացորդները

Հյուսիսից և արևելքից բազիլիկը եզերում է խնամքով կառուցված, բայց շատ վատ պահպանված մի «պարսպապատ»: Այն հետաքրքրություն է շարժում ի միջի այլոց իր կողմնորոշմամբ, որ եկեղեցու կողմնորոշումից թեթևորեն տարբեր է, մի բան որ ուղիեցով թելագրված չէ: Արդյո՞ք դա նշանակում է, որ «պարսպապատը» նախորդել է եկեղեցուն: Հարցը մնում է բաց: Պարիսպն ունի արտաքուստ տեսանելի՝ համեմատաբար կանոնավոր դասավորությամբ, տրամատված խարիսխներով մի շարք ելուստներ: Դրանց մեջ առանձնանում են պատի արևելյան երկար հատվածից արևելք ցցվող երկու խորան-խորշերը, որոնք իրենց ներքին գոգավորությամբ բացվում են դեպի արևմուտք՝ եկեղեցական տարածքի վրա:

Հորատումներն ու դիտարկումները մտածել են տալիս, որ «պարսպապատին» ցանկացել են հաղորդել ավելի շուտ գեղագիտական-խորհրդանշական հանդիսավորություն, քան իսկապես պաշտպանական բնույթ: Ի դեպ տեղանքի ընդհանուր հանույթը հուշում է «պարսպապատի» և ձորակը (ժամանակին) փակող «ամբարտակի» միջև կապի հնարավորությունը, որն իր հերթին առաջացնում է հանդիսավոր ուղեկամուրզի (νίαδις-ի) վարկածը: Միաժամ-

²⁸ **Б. Аракелян**, «Армения в IX-XIII веках», *Археология. Крым, Северо-Восточное Причерноморье и Закавказье в эпоху средневековья*, под ред. **Б. А. Рыбакова**, Типуլիա, 2003, № 335-350, տախտակ 157, № 443, նկ. 26-28:

նակ բացառված չէ, որ պատի գոգավոր հատվածներն ունեցել են նաև մահարձանային նշանակություն:

2014 թ. պեղումներ կատարվեցին այդ պատի մեջ բացված խորանանման երկու խորշերից մեկի տակ, և հայտնաբերվեց մի խոր ու լայն փոս, որի մեջ ավաղ գանձախուզվներն արդեն փորել էին (տե՛ս ներդիր, նկ. 16): Սակայն բացառված չէ դամբարանի առկայությունը: Դժբախտաբար, գործընկերոց մահվան պատճառով արշավախումբը չկարողացավ ավարտել այդ զննումն ու պեղել նաև մի քիչ ավելի հարավ՝ երկրորդ խորշի տակ:

Բազիլիկից հյուսիս-արևելք փոքր ձորակում կիսաթաղված շենքն²⁹ ու դրանից հարավ՝ ձորակը հատող պատերի մնացորդները մի շարք հարցեր են հարուցում կապված դրանց և թվագրման և գործառույթի հետ: Պատասխանների մի մասը կարող է տալ ձորակի ստորգետնյա շերտերի ուսումնասիրությունը, որին լծված է արշավախմբի երկածեաբան (*géomorphologue*) հնագետը:

Կիսաթաղված շենքը 1984 թ. ուսումնասիրել է հանգուցյալ հնագետ Ֆ. Տեր-Մարտիրոսովը, որ դրա գործառույթի համար առաջարկել է սկզբից ջրամբարի (ցիստեռնի) և հետո դամբարանի վարկածները: 2013 թ. արշավախմբի երկածեաբանը հորատում կատարեց շենքից արևելք և ի հայտ բերեց ժայռերի արհեստական մի կուտակում՝ պատնեշ՝ ստեղծված հավանաբար շենքը ջրից պաշտպանելու համար: Այս հանգամանքը թուլացնում է ջրամբարի ենթադրությունը և ուժեղացնում ի սկզբանե կիսաթաղված շինության դամբարանային գործառույթի վարկածը:

Պատնեշի առկայությունը մտածել է տալիս նաև, որ գետակի սկզբնական հունն ու տեսքը այժմվանից տարբեր են եղել, մի տարբերություն, որ տրամաբանորեն կապվում է ձորակը հատող երեք-չորս պատերի համակարգի հետ: Այդ պատերի հյուսիսային (հոսանքն ի վեր) երեսը խնամքով մշակված է և որմնամույթերով ու աստիճաններով ուժեղացված, մի բան, որն իր հերթին մատնանշում է ամբարտակից տարբեր, սկզբնական մի այլ գործառույթ, կապված գուցե եկեղեցու արևելյան պարսպի հետ, որի կարծես շարունակությունն է կազմել այդ պատերի համակարգը: Այստեղ ևս գեռ բազմաթիվ հարցականներ են մնում...:

Կերը նշեցինք ուղեկամբջի (viaduc-)ի վարկածը: 2014 թ. գիտարշավի ժամանակ հնավայրից հարավ-արևելք տարածվող սարահարթի վրա կատարված տեղանքի զննումը թույլ տվեց վերհանելու «ամբարտակի» առանցքով, դրանից արևելք ընթացող մի ճանապարհի հետքերը: Բավական կանոնավոր եզրերով և մոտ երեք մետր լայնությամբ, կառանցիկի տպավորությունը թող-

²⁹ Դրա մասին տե՛ս **Փ. Տեր-Մարտիրօսօվ**, «Мало изученные памятники Ереванка», Հայոց սրբերը և սրբավայրերը, Եր., 2001, էջ 234-243, այստեղ էջ 241-243:

նող կարծես մի ուղի է դա, որ այսօրվա մեր գիտելիքներով հնարավոր չէ թվագրել, բայց որ կարող է հավելալ փաստարկ հանդիսանալ վերը նշված վարկածն ամրապնդելու համար: Այսինքն փաստելու համար, որ ձորակը հատող պատերի համակարգը՝ որպես ջրամբարային ամբարտակ ծառայելուց առաջ եղել է հանդիսավոր ուղեկամուրջ, որով արևելքից, թերևս Դվինից կամ Վաղարշապատից եկող ուխտավորը կամ ճամփորդը հասնում էր մինչև համբավավոր սրբարանը: Հավելենք, որ 2014 թ. պեղումները «ամբարտակի» վերջին ու նախավերջին պատերի արանքում ի հայտ բերեցին հնագիտական նյութեր, որոնք դեռ ուսումնասիրվում են, բայց ամենայն հավանականությամբ կապվում են անտիկ և ուշ անտիկ շրջանի հետ:

6. Պրատումների սահմանափակումներ ու հեռանկարներ

2013 և 2014 թթ. գիտարշավները (թեպետ երկրորդը ծրագրված ժամկետից կանուխ ընդհատվեց) մի շարք հետաքրքիր արդյունքներ տվեցին, որոնք փորձեցինք ամփոփել վերևում: Թվեցինք այն կարեոր նորույթները, որոնք վերաբերում են բազիլիկին ու դրա պատմությանը, խաչակիր կոթողներին ու դրանց պատվանդաններին, գերեզմանոցին ու ընդհանրապես մահարձանային հնագիտությանը, ձորակում գտնվող թաղածածկ շենքին ու առեղծվածային «ամբարտակին»: 2014 թ. գիտարշավը հնարավորություն տվեց նաև ավարտին հասցնել հնավայրի տարրեր մասերում գտնվող քանդակագարդ քարերի բազմաթիվ բեկորների կատալոգը³⁰: Իսկ քանդակագարդ այդ բեկորների ուսումնասիրությունը առատ լույս կարող է սփոել երերույքի հուշարձանների պատմության ու գեղարվեստական արժեքի վրա:

Վերջապես նշենք, որ երերույքի հուշարձանախմբի պահպանման ու վերօգտագործման հարցերը նույնպես մտահոգում են արշավախմբին, որ այս կապակցությամբ գործակցում է ՀՀ Մշակույթի նախարարության հետ: Սակայն այդ մասին ս. թ. հունիսին արդեն զեկուցում է ներկայացվել երևանում կազմակերպված՝ պատմամշակութային ժառանգության պահպանությանը նվիրված գիտաժողովում, որի նյութերը պիտի շուտով հրատարակվեն³¹: Ուստի անհրաժեշտություն չկա այստեղ այդ հարցերին նորից անդրադառնալ:

Արշավախումբը լավ գիտակցում է, որ երերույք հնավայրի վիթխարի ծավալն ու բազմաշերտ խորությունը պահանջում են մարդկային ու նյութական շատ ավելի մեծ միջոցներ, քան եղածները: Արշավախումբը համոզվել է նաև, որ հնավայրը ներկայացնում է բազմաթիվ բարդություններ՝ կապված խորհրդա-

³⁰ Բազմաթիվ (երկու հարյուրից ավել) այդ բեկորներից կարևորների գծագրային հանույթները կատարում է արշավախմբի երևանցի անդամ, երեքունու քանզարանի աշխատակից, հնագետ-նկարիչ Աննա Ազիզյանը:

³¹ Պ. Տոնապետյան, «Երերույք հնավայրի պահպանություն», Պատմամշակութային ժառանգության պահպանություն. Միջազգային գիտաժողով, Եր., 2014 թ. հունիսի 4-6:

յին շրջանում կատարված ու շատ անբավարար ձևով կամ բոլորովին ոչ վավերագրված աշխատանքների հետ, որոնց հետևել է ամենաթողության մի շրջան, երբ բազմացել են գանձախուզպների վայրենի պեղումները։ Այնուամենայնիվ, ձգտելով կիրառել *LA3M*-ին հատուկ բազմակողմանի, միջմասնագիտական ու համընդգրկող մոտեցումը, իր կարողությունների սահմաններում, արշավախումբը հույս ունի պատասխանելու իր առջև դրված հարցերից գոնե մի քանի-սին։ Հույս ունի նաև, որ արծարծված խնդիրներն ու ձեռք բերված արդյունքները նոր սերնդի մասնագետների ուշադրությունը կգրավեն դեպի կարևոր ու խոստումնալից մի ասպարեզ, որ ցարդ անտեսվել է հայ հնագետների կողմից՝ դա միշնագարյան Հայաստանում քրիստոնեական թաղման ծեսի ուսումնասիրությունն է։

Բարեբախտաբար Երերովք Հնավայրը, ինչպես դրա նման անթիվ հայկական այլ հնավայրեր, շատ ընդարձակ է ու առեղծվածներով հարուստ, ուստի դեռ առատ ու պարարտ հող է պարունակում բազմաթիվ նոր գիտարշավների ու գիտական պրատումների համար։

Patrick Donabedian The Results of the 2013-2014 Archaeological Campaigns on the Site of Yereruyk

The investigations carried out since 2009 on the Early Christian and Medieval site of Yereruyk by a joint Armenian-French archaeological mission have already been presented through several public, published or forthcoming, and on-line reports (see notes n° 4-6). The aim of the present article is to give short information on the main results of the last campaigns of 2013 and 2014. They concern the three-nave basilica, its history, dating, hypotheses of reconstitution, the cemetery discovered on its southern and eastern sides, and the study of the tombs, the remains of memorial monuments preserved on this funeral-memorial area, the fence wall ("rampart") which marks the eastern edge of the ecclesial area, with its abutments and "exedras", the vaulted building to the North-East of the basilica, at the bottom of a small valley, and the remains of a "dam" which once crossed this valley, to the South-East of the church. The objective of the multidisciplinary approach developed by the LA3M together with the archaeologists of the Gyumri Regional Museum is to try to better apprehend the history of this enigmatic ensemble, the chronological and functional links between its components, the relations with its environment, and finally the reasons of the presence of such a large complex in an area now deprived, but probably actively involved, in the past, in the regional life, between Dvin, Vagharshapat and Ani.

